ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հունվարի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

3
(2669)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 3

2022 թվականի հունիսի 21-ին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հարցազրույց էր տվել «Ազատություն» ռադիոկայանին: Ի թիվս այլ հարցերի՝ հարցազրույցի ժամանակ անդրադարձ էր եղել նաեւ ՀՀ անվտանգության, Ադրբեջանում պահվող ռազմագերիների եւ Ակնայի ականապատ տարածքների քարտեզների թեմային: «Մայիսի 27-ից առաջ երկար ժամանակ գերիների հարցը չէր լուծվում: Երբ պարոն Այվազյանը (նկատի ունի ՀՀ արտաքին գործերի նախարար Արա Այվազյանին-խմբ.) հրաժարական տվեց, շատ արագ այդ հարցը լուծվեց: Եվ պարոն Այվազյանը, լինելով պաշտոնյա, մեր գործընկերներին ասում էր, որ ականապատ դաշտերի քարտեզները, որոնք մենք արդեն տվել ենք, այդ քարտեզները մենք չունենք: Եվ երբ պարոն Այվազյանը պաշտոնից հրաժարական տվեց, նաեւ հնարավորություն ստեղծվեց այս հարցը լուծելու»,- ասել էր Արմեն Գրիգորյանը: Դրանից հետո Արա Այվազյանը պատասխանեց Արմեն Գրիգորյանի հայտարարություններին՝ դրանք որակելով որպես զրպարտություն: Ապա նա ընդգծել էր, որ հրաժարականից մեկ շաբաթ առաջ այն ժամանակ դեռ կառավարության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանն արդյունավետ եւ դրական էր գնահատել Արտաքին գործերի նախարարության աշխատանքը: Մեկ այլ անգամ Արմեն Գրիգորյանը մանիպուլատիվ հայտարարություն էր արել «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ՝ 2021 թվականի ապրիլի 3-ին: «Տեխնոլոգիաների եւ ռազմավարությունների վերլուծության կենտրոնը («ՑԱՍՏ») հրապարակել է ուսումնասիրություն, որում գնահատվել է Ռուսաստանի դաշնակիցների գործունեությունը: Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների մասով Հայաստանը ամենասկզբունքային եւ հուսալի պետություններից մեկն է»,- ասել էր նա: Սակայն Արմեն Գրիգորյանը մանիպուլացրել էր «ՑԱՍՏ»-ի գնահատականը: Իրականում Հայաստանը բնութագրված է որպես «Միջին կարեւորության եւ մեծ հավատարմություն» ունեցող երկիր, եւ հավելում են. «Հարաբերությունների եւ դաշինքի հետագա շարունակական զարգացումը մեծ հաշվով այսուհետ կախված է Հայաստանի նոր ղեկավարության քայլերից եւ որդեգրած քաղաքականությունից»: Այսինքն՝ նրա խոսքերում մանիպուլյացիա է առկա:



Գորիսում արցախցիները «սառը» վերաբերմունք են ցույց տվել ՔՊ-ական պատգամավորներին. հանդիպումը հարթ չի անցել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ամանորից առաջ իշխող խմբակցության պատգամավորներ Արմեն Խաչատրյանը, Հայկ Ցիրունյանը, Վահագն Ալեքսանյանը եւ Դավիթ Առուշանյանն այցելել են Արցախի շրջափակման հետեւանքով Գորիսում մնացած արցախցիներին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանդիպումն այդքան էլ հարթ չի անցել, արցախցիները բավականին սառն են ընդունել ՔՊ-ական պատգամավորներին: Ամեն դեպքում, արցախցիներն իրենց վերաբերմունքն են ցույց տվել ՔՊ-ականներին եւ հասկացրել են, որ Արցախում այսօր ստեղծված իրավիճակի առաջին պատասխանատուն եւ մեղավորը հենց իրենք են: Այս առիթով մեկնաբանություն խնդրեցինք իշխող խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանից, որն արձագանքեց. «Հանդիպումը հարթ է անցել, որեւէ միջադեպ կամ դժգոհություն չի եղել: Արցախցիներից հետաքրքրվել ենք՝ ինչ խնդիրներ կան, փորձել ենք լուծումներ գտնել, դիմել ենք նաեւ մարզպետարան: Ընդդիմադիր լրագրող էլ է այնտեղ եղել, կարող եք իրենից հարցնել»: Հավելենք, որ այդ հանդիպումից հետո շատ ՔՊ-ականներ խուսափում են այլեւս այցելել արցախցիներին: Նրանցից շատերը արդեն մեկ ամիս է՝ մնացել են Երեւանում եւ չեն կարողանում վերադառնալ Արցախ, բայց իշխող պատգամավորներն այլեւս չեն այցելում:

Հակակոռուպցիոն դատարանում «Ժողովուրդ» օրաթերթը երեկ հարց ուղղեց կալանքի տակ գտնվող դատավոր Արուսյակ Ալեքսանյանին: «Տիկին Ալեքսանյան, դատական եւ իրավապահ համակարգում տարածված լուրերի համաձայն՝ Դուք տարբեր անձանց մասով կալանքի որոշում կայացնելուց առաջ քննարկել եք հարցերը Հակակոռուպցիոն դատարանի նախագահ Սասուն Խաչատրյանի եւ ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի հետ: Արդա՞ր է, որ հիմա միայն Դուք եք մեղադրյալի աթոռին հայտնվել»: Ի պատասխան՝ Արուսյակ Ալեքսանյանն ասաց. «Ովքեր Ձեզ նման բաներ են ասում, գնացեք, իրենցից էլ հարցրեք»: Այլ հարցի չպատասխանեց: Երեկ Հակակոռուպցիոն դատարանում կայացավ դատավոր Արուսյակ Ալեքսանյանի դեմ հարուցված քրեական գործով առաջին նիստը, որը հետաձգվեց: Գործը մակագրվել է Հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով մասնագիտացմամբ դատավոր, նախկին դատախազ Վահե Դոլմազյանին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազգային անվտանգության ծառայությունը նախաքննության ավարտ է հայտարարել Երեւան քաղաքի դատավոր Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ հարուցված քրեական վարույթով: ԱԱԾ-ն դատավորին մեղադրում է ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու եւ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին պատկանող ընկերությունը՝ «Սիլ ինշուրանս»-ը, պարբերաբար հայտնվում է պետական որոշ կառույցների ուշադրության կենտրոնում: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն պահանջել է պատգամավորի ընտանիքին պատկանող ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այսինքն՝ ընկերությանը, այսպես կոչված, «սեւ ցուցակում» ներառելու պահանջի պատվիրատուն ՊԵԿ-ն է: «Սիլ ինշուրանս»-ը, սակայն, չի հայտնվել «սեւ ցուցակում»: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց «Սիլ գրուպ» -ի մամուլի խոսնակ Աննա Մկրտչյանը՝ նշելով. ««Սիլ ինշուրանս»-ը երբեւէ չի ներառվել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում» : Հիշեցնենք՝ անցած տարեվերջին գլխավոր դատախազությունը դատական կարգով վիճարկել է Երեւանի կենտրոնում գտնվող «Սիլ պլազա» բիզնես կենտրոնի սեփականաշնորհման օրինականությունը: Այս շենքը, ինչպես հայտնի է, պատկանում է «Գռզո պլազա» ՍՊԸ-ին:

ԱՍՈՒԼԻՍ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԵԶ ԿԱՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունվարի 10-ի մամուլի ասուլիսի ժամանակ այն նույն մտքերն է հիմնականում արտահայտել, ինչ 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո բազմիցս է հնչել նրա շուրթերից: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշում է քաղաքական տեխնոլոգիաների մասնագետ Արմեն Բաղալյանը: Նա նաեւ նկատում է, որ ՀԱՊԿ-ի մասին Նիկոլ Փաշինյանի արած հայտարարությունները 3-4 ամսվա ընթացքում ձեւավորված տեսակետի շարունակությունն էին այն իմաստով, որ այդ կառույցի՝ Հայաստանում գործունեությունն այնքան էլ նատակահարմար չէ:

Մեր զրուցակիցը նաեւ ասում է, որ Նիկոլ Փաշինյանի հիմնական նպատակներից էր ավելի ու ավելի մեղավորությունը գցել ռուսական կողմի վրա ստեղծված իրավիճակի կապակցությամբ: «Առաջինը Հայաստանում ստեղծված իրավիճակում Ռուսաստանի մեղավորությունն ավելի ընդգծելն էր: Երկրորդը՝ ռուսական զորքերի Հայաստանում ներկայությունը վտանգավոր համարելն էր հենց մեր երկրի համար»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց նա:

-Պարոն Բաղալյան, ինչպիսի՞ տպավորություն ստացաք հունվարի 10-ին տեղի ունեցած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ասուլիսի ժամանակ նրա հնչեցված մտքերից:

-Մեծամասամբ այն նույն մտքերն էին հնչում, ինչը նա 2020 թվականի արցախյան կապիտուլյացիայից հետո բազմիցս, տարբեր առիթներով հնչեցրել էր: Բայց պետք է ասեմ, որ որոշակիորեն որոշ մտքեր, մասնավորապես՝ՀԱՊԿ-ի հետ կապված, վերջին մի քանի ամիսների ընթացքում ձեւավորված թրենդի կամ քաղաքականության շարունակությունն էին: Գաղտնիք չէ եւ արդեն նկատելի է այն հանգամանքը, որ, սեպտեմբերից սկսված, ՀՀ իշխանություններն ավելի ու ավելի են հակառուսական քաղաքականություն իրականացնում: ՀԱՊԿ զորավարժությունների չանցկացնելը Հայաստանում մի փոքր այլ է, բայց տեղավորվում է այդ թրենդի մեջ: Այսինքն՝ եթե նախկինում հակառուսական որոշ հայտարարություններ անելուց հետո դրանք դադարեցվում էին, հերքվում էին, ապա վերջին ամիսներին դրանք ավելի ու ավելի կայուն բնույթ են ստանում, եւ ասուլիսի ժամանակ եւս հենց ՀԱՊԿ-ի հետ կապված խնդիրն այդ քաղաքականության շարունակությունն էր հանդիսանում:

-Ըստ Ձեզ՝ ի՞նչ նպատակ էին հետապնդում նրա հայտարարությունները:

-Ամբողջ ասուլիսում բոլոր հարցերը նաեւ տեղավորվում էին այդ մի քանի ամսվա քաղաքականության մեջ՝ ավելի ու ավելի ընդգծել Ռուսաստանի Դաշնության մեղավորությունը ստեղծված իրավիճակում: Երեկ առաջին անգամ ոչ ուղղակի առաջ քաշվեց այն միտքը, որ ռուսական զորքերի՝ Հայաստանում գտնվելու հանգամանքը սկսում է վտանգ սպառնալ Հայաստանին: Փաշինյանը նշեց՝ կգան, զորավարժություն կանեն, հետո կհեռանան, ու այնտեղ Ադրբեջանն ու Թուրքիան իրենց համար դա վտանգ կզգան: Ընդհանրապես, պետք է նայել, թե ռուսական զորքերը ինչպես են վտանգ ներկայացնում. նա փորձում է ինչ-որ բաներ գտնել, բայց առաջին անգամ իր կողմից շրջանառության մեջ դրվեց այն հանգամանքը, որ ռուսական զորքերի առկայությունը վտանգ է հարեւան երկրների համար: Առաջին անգամ էր նման բան ասվում: Անուղղակի ասվել էր այլ առիթներով, սակայն ամենաբարձր մակարդակում սա առաջին անգամ հնչեց եւ դրվեց շրջանառության մեջ:

-Կա՞ր վտանգավոր թեզ, ըստ Ձեզ, մամուլի ասուլիսի ժամանակ:

-Հենց դա էր վտանգավոր, որ ռուսական զորքերի առկայությունը կարող է վտանգ ներկայացնել Հայաստանի համար: Հենց այս թեզը կարող է հետագայում զարգացվել եւ ներկայացվել, որ այդ վտանգը կարող է չեզոքանալ այն դեպքում, երբ ռուսական զորքերն այստեղից հեռանան: Հարցն այն է, որ ռուսական զորքերն այստեղից չեն հեռանալու:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ

ԿԵՂԾԻՔԸ ՉԻ ՎԵՐԱՆԱ

Ազատ ընտրությո՞ւն, թե՞ նոր ընտրակեղծարարություն: Թերեւս այդողիսի հարց է առաջանում, երբ ծանոթանում ես Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Հովիկ Աղազարյանի եւ Հակոբ Ասլանյանի ներկայացրած օրենքի նախագծին: Մասնավորապես, նրանք առաջարկում են փոփոխություն կատարել Ընտրական օրենսգրքում եւ ամրագրել, որ քվեախցիկը պետք է տեղադրվի այնպես, որ ընտրողը քվեարկության պահին լինի թիկունքով դեպի հանձնաժողովը:

Հիմնավորման մեջ պատգամավորները նշում են, թե ներկայումս գործող կարգավորմամբ, երբ քվեարկողը դեմքով է դեպի հանձնաժողովը, խոչընդոտվում է գաղտնիությունը, եւ ամենասովորական հեռախոսով հնարավորություն կա քվեաթերթիկը լուսանկարելու: Նրանք շարունակում են. «Յուրաքանչյուր ընտրող կարող է որեւէ մեկին խոստանալ իր ձայնը կոնկրետ թեկնածուին կամ քաղաքական ուժին տալու, իսկ հետո, ունենալով ազատության, բավարար ապահովվածության ընտրությունը, կատարել իր խղճի եւ համոզմունքների համաձայն: Վերը նշված հնարավորությունը կարող է էապես ազդել ընտրության վրա, որովհետեւ ցանկալի խոստումը լսելուց հետո հավանական ընտրակեղծարարը «կխնդրի» ընտրողին լուսանկարել քվեաթերթիկը եւ նույնիսկ տեսանկարահանել քվեարկության գործընթացը»,- նշվում է նախագծի հիմնավորման մեջ:

ՔՊ-ական պատգամավորները կարծում են, որ եթե քվեախցիկների դիրքը փոխեն, եւ հնարավոր լինի ընտրողների հետեւը կանգնել, վերահսկել նրա քայլերը, առավելագույնս կապահովվի քվեարկության գաղտնիությունը, թափանցիկությունը եւ, որ ամենակարեւորն է, ընտրողի ազատ կամարտահայտությունը, քանի որ անհնար կլինի լուսանկարել քվեաթերթիկը: Իրականում իշխող կուսակցության անդամները ընտրակեղծիքի, ընտրողի քվեարկությունը վերահսկելու նոր մեխանիզմ են գործի դնում, քանի որ նախագծում հստակ չեն գրել, թե, օրինակ, հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը որքան հեռավորություն պետք է պահպանի ընտրողից: Ընդամենը նշված է. «Եվ եթե քվեախցիկները տեղադրվեն քվեարկության գործընթացին մասնակիցներից պատշաճ հեռավորության վրա, ինչն անհնարին կդարձնի նկատել, թե ընտրողը ինչպես է քվեարկում, ապա ե՛ւ քվեարկության գաղտնիությունը ապահովված կլինի, ե՛ւ ընտրողի ազատ կամարտահայտումը»: Իսկ ո՞րն է պատշաճ հեռավորությունը:

Ով կարող է երաշխավորել, որ ընտրախցիկին մոտեցած՝ ընտրողի հետեւը չեն գալու կանգնեն ինչ-որ մարդիկ՝ հստակ ուղղորդելով՝ ինչպես քվեարկել: Ակնհայտորեն խախտվելու է քվեարկության գաղտնիության սկզբունքը: Նկատենք, որ քվեաթերթիկ լուսանկարելու պրակտիկա միշտ եղել է, եւ անգամ Նիկոլ Փաշինյանը, երբ ընդդիմադիր պատգամավոր էր, խորհրդարանում փակ քվեարկությունների ժամանակ լուսանկարում էր քվեաթերթիկը ու հրապարակում: Փաստորեն, Աղազարյանն ու Ասլանյանը պայքարում են հենց իրենց ղեկավարի նախկին գործելաոճի դեմ: Իրականում ապագա ընտրությունները վերահսկելու մեխանիզմ է գործի դնում իշխող ՔՊ-ն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՌԵՐԵՍՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանն առաջիկայում կազմակերպելու է Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահներ Ռուբեն Վարդազարյանի եւ Գագիկ Ջհանգիրյանի առերեսումը Հակակոռուպցիոն կոմիտեում: Հիշեցնենք, որ 2022 թվականի հունիսի 20-ին հրավիրված ասուլիսին Ռուբեն Վարդազարյանը հրապարակել էր ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի հետ ունեցած զրույցի ձայնագրությունը, որը մերկացնում էր ողջ դատական համակարգը (թե ինչպես են Գագիկ Ջհանգիրյանի «վզին դրվում» ինչ-ինչ քաղաքական հրահանգներ): 6 ամիս քննելով գործը՝ Քննչական կոմիտեն տուժող չճանաչեց Ռուբեն Վարդազարյանին, քրեական վարույթով որեւէ մեկը մեղադրյալ չներգրավվեց: Եւ հիմա որոշվել է ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի եւ ԲԴԽ նախագահի նախկին պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանի խոսակցության ձայնագրության վերաբերյալ քրեական վարույթը վերաբացել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել էր Ռուբեն Վարդազարյանը: Ավելին՝ վերացվել են նաեւ Գագիկ Ջհանգիրյանի, ԲԴԽ անդամներ Սերգեյ Չիչոյանի եւ Վիգեն Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու եւ գործի վարույթը կարճելու մասին քննիչի որոշումները, եւ վարույթը Քննչական կոմիտեից, ըստ քննչական ենթակայության, ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե: Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ քրգործ հարուցվեց մի դատավորի հետ նրա զրույցի գաղտնալսման արդյունքում, դրա համար էլ նա իր եւ Ջհանգիրյանի զրույցը հանրայնացրեց: Ստացվում է, որ ԲԴԽ երկու նախագահներն էլ պաշտոնը կորցրեցին գաղտնալսման հետեւանքով:

ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ՎԱՐՈՒՄ

Ազգային ժողովի «Քաղաքացիական խմբակցության» պատգամավոր Թագուհի Ղազարյանը, բացի պատգամավորական գործունեությունը, պարզվում է, նաեւ հաղորդում վարելով է զվաղվում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ բոլորովին վերջերս մայրաքաղաքային սփռման համար լիցենզիա ստացած «ԲունTV»-ով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ղազարյանը «Երկիր Նաիրի» հաղորդումն է վարում: Թեեւ «Պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքը (հոդված 2, կետ 1-ին) Ղազարյանին արգելում է այլ վճարովի աշխատանք կատարել, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից, այնուամենայնիվ, պատգամավորը հաղորդում է վարում: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց պարզել հեռուստաընկերությունից՝ ինչու են հաղորդավար հենց պատգամավորին ընտրել, եւ որքան աշխատավարձ է նա ստանում: «Քանի որ սա հաղորդում է՝ կառուցված կոնկրետ աշխատության շուրջ, դեռ նախորդ տարի Թագուհի Ղազարյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Երկիր Նաիրի»-ի մասին է հաղորդումը, հետեւաբար նա էլ հենց հաղորդման հեղինակ-վարողն է»,- մեզ հետ զրույցում պարզաբանեցին «ԲունTV»-ից: Փաստորեն, ստացվում է՝ ոչ թե հեռուստաընկերությունն է Ղազարյանին առաջարկել հաղորդում վարել, այլ գուցե պատգամավորն ինքն է հաղորդում վարելու առաջարկով հանդես եկել, ինչն էլ ՀԸ-ն չի մերժել: Այս ամենի մասին, իհարկե, նաեւ Թագուհի Ղազարյանի տեսակետն էինք ցանկանում լսել, նա, սակայն, մեր զանգերին ու հաղորդագրություններին հարկ չհամարեց արձագանքել: Իսկ ինչ վերաբերում է վարձատրությանը, ասացին, թե կամավոր է աշխատում՝ առանց վճարի, այսինքն՝ պատգամավորն աշխատում է առանց աշխատավարձի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է

«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության նախագահ Արա Զոհրաբյանն օրեր առաջ Facebook-ի իր էջում հրապարակում էր արել ու ահազանգել, որ, ըստ Առողջապահության նախարարության ընդունած փաստաթղթի, բժշկական հաստատություններում հետայսու երեխաների պատմագրերում սեռի դիմաց բացի «արականն» ու «իգականը» կարող է նաեւ չճշտվածը գրվել:

«Երեխայի ծննդյան վկայականի մեջ արդեն իսկ նշվում է, թե նա ինչ սեռի է, հետեւաբար Առողջապահության նախարարությունը չի կարող պատճառ գտնել ու ասել, թե իրավիճակներ են լինում, երբ երեխայի սեռը հայտնի չի լինում, հետեւաբար դրա համար ենք երեխայի սեռի դիմաց գրում «չճշտված»»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասել էր Զոհրաբյանը:

ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան՝ նախարարությունից տեղեկացրին, որ 2023թ. հունվարի 1-ից է ուժի մեջ մտել երեխայի հիվանդության պատմագրի ձեւը, ինչը բացառապես բուժաշխատողների համար է նախատեսված:

«Անդրադառնալով պատմագրի ձեւի կետ 21-ում նշված երեխայի սեռին վերաբերող տողի «չճշտված (մինչ գենետիկ քննությամբ սեռի որոշումը)» ձեւակերպմանը՝ հարկ է նշել, որ եզրույթը զուտ բժշկական նշանակություն ունի՝ նախատեսված նորածնային եւ կրծքի հասակի երեխաների համար: Ցավոք, առկա են մի շարք ախտորոշումներ, որոնց դեպքում երեխայի ծննդի պահին հնարավոր չէ որոշել երեխայի սեռը՝ ելնելով արտաքին սեռական օրգանների տեսքից: Նման խնդրի կարող են հանգեցնել մի շարք ախտաբանություններ, օրինակ, մակերիկամի կեղեւի բնածին դիսֆունկցիան, Թերների համախտանիշը, կեղծ հերմաֆրոդիտիզմը, բնածին զարգացման արատները, քրոմոսոմային անէուպլոդիաները եւ այլն: Այս դեպքերում պահանջվում են լրացուցիչ լաբորատոր-գործիքային քննություններ, այդ թվում՝ գենետիկական հետազոտություն (կարիոտիպի որոշում): Նշված բժշկական խնդիրներով երեխաները եզակի են, բայց կան, ուստի վերջիններիս հիվանդանոցում գտնվելու, անհրաժեշտ հետազոտություններն ու բուժումը ստանալու ժամանակահատվածում նրանց սեռի վերաբերյալ եւս նշում պետք է լինի: Հետազոտությունների արդյունքում սեռը պարզ դառնալուց հետո միայն հնարավոր է պատմագրում լրացնել «արական» կամ «իգական» դաշտերը»,- մեզ հետ զրույցում ասացին Առողջապահության նախարարությունից:

Նախարարությունից տեղեկացրին նաեւ, որ դեռեւս ԽՍՀՄ-ում գործող «Ծննդի մասին» բժշկական վկայականի քաղվածքում եւս առկա է եղել նշում՝ «տղա», «աղջիկ», «չորոշված»: Նման կարգավորում նաեւ 2009 թվականին հաստատված ««Ծննդի մասին» բժշկական վկայականում» է եղել, որը վերանայվել եւ վերահաստավել է 2017-ին: Այստեղ կրկին նշվում է՝ «արական», «իգական», «չի որոշված»:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԼԱՉԻՆԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԻՑ ՄԵԿ ԱՄԻՍ ԱՆՑ

Մեկ ամիս առաջ՝ դեկտեմբերի 12-ին՝ ժամը 10:30-ին, ադրբեջանական կողմը էկոակտիվիստների անվան տակ արգելափակվել է Արցախը Հայաստանին եւ աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը:



Դադարեցվել են դեպի Արցախ մատակարարումները, կանգնել է տնտեսությունը, դատարկվել են խանութները, բնակչությունը, այդ թվում՝ 30 հազար երեխաներ, թերսնման վտանգի առջեւ են:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ռուս խաղաղապահների միջոցով հնարավոր է լինում փոքր ծավալի դեղորայք եւ հումանիտար բեռներ բերել, բայց դա բավարար չէ խորացող հումանիտար ճգնաժամը կանխելու համար:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով միայն ծանր հիվանդներին է հնարավոր լինում տեղափոխել Երեւան, իսկ մյուսները զրկված են պատշաճ բուժօգնություն ստանալու իրավունքից:

Այսպիսով, խախտված են մարդկանց ազատ տեղաշարժի, առողջապահության, կրթության, պատշաճ սննդի եւ այլ կենսական իրավունքները:

Արցախի շրջափակման հարցը քննարկվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, որն Ադրբեջանի նկատմամբ միջանկյալ միջոց է կիրառել, բայց Ադրբեջանը շարունակում է փակ պահել ճանապարհը՝ 120 հազար մարդու պահելով պատանդի կարգավիճակում:

Լաչինի միջանցի փակումը դատապարտել եւ այն անհապաղ բացելու կոչ են արել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, Հռոմի Պապը, Եվրախորհրդարանը, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, USAID-ն, բազմաթիվ իրավապաշտպան կազմակերպություններ, այդ թվում՝ Human Rights Watch-ը, Freedom House-ը, UNICEF-ը, Genocide Watch-ը եւ այլն:

Բնապահպան ներկայացնող ադրբեջանցիները Կաշենի ու Դրնբոնի հանքավայրերում ստուգումներ են պահանջում, որ կանխեն, ինչպես պաստառներին են գրել, «էկոցիդը»: Սակայն լրատվամիջոցները շատ կարճ ժամանակում կարողացան բացահայտել, որ բնապահպանությունից նրանք հեռու են, ցույցերի, ակցիաների երբեւէ չեն մասնակցել, փոխարենը սոցիալական ցանցերում ակտիվ գովերգում են Ալիեւների ընտանիքին, խրախուսում հայատյացությունը եւ այլն:

Ու թեեւ Արցախի իշխանությունները հայտարարեցին հանքարդյունահանումը դադարեցնելու մասին պայմանը, որ միջազգային փորձագետները դիտարկեն տարածքը, ճանապարհը չբացվեց: Պաշտոնական Երեւանը հենց առաջին օրվանից Ռուսաստանի կողմն է կարծես թե ուղղում ակնկալիքները՝ մեղադրելով, թե խաղաղապահները Արցախի հայաթափման լուռ վկան են դարձել:

«Դե ֆակտո ստացվում է, որ եռակողմ հայտարարությամբ արձանագրված պարտավորությունը, այն է՝ վերահսկողության տակ պահել Լաչինի միջանցքը, չի կատարում նաեւ Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը», - հայտարարել է վարչապետ Փաշինյանը:

Ադրբեջանի արտգործնախարարությունը ինչպես շրջափակումից առաջ, այնպես էլ այս ընթացքում կրկնում է. «Ղարաբաղն Ադրբեջանի անքակտելի մասն է, եւ այնտեղ ապրող բնակչության իրավունքներն ու անվտանգությունը կերաշխավորվեն Ադրբեջանի օրենքներով ու Սահմանադրությամբ»:

Ռուսաստանի պաշտպանության նախարարության ամենօրյա տեղեկագրերում գրեթե ամեն օր միայն նշվում է, որ բանակցությունները հայկական եւ ադրբեջանական կողմերի հետ շարունակվում են:

Այս ընթացքում ընդամենը տասը տոննա բեռ է Հայաստանից Արցախ տեղափոխվել Կարմիր խաչի միջնորդությամբ (մանկական սնունդ, դեղեր ու բժշկական պարագաներ), այնինչ, ըստ մոտավոր հաշվարկների, օրական մոտ 400 տոննա բեռ էր մինչեւ շրջափակումը Ղարաբաղ մտնում: Ծայրահեղ ծանր վիճակում հայտնված 18 հիվանդ Արցախից Հայաստան է տեղափոխվել Կարմիր խաչի միջոցով, Ստեփանակերտի պնդմամբ՝ հիվանդանոցների վերակենդանացման բաժանմունքներում մոտ 3 տասնյակ մարդ սպասում է իր հերթին, այդ թվում՝ երեխաներ:

Հազարից ավելի մարդ մեկ ամիս է՝ սպասում է Հայաստանում, որ ճանապարհը բացվի, հասնեն ծնողներին, զավակներին: Ռուսաստանից Արցախ տեղափոխված Ռուբեն Վարդանյանը, ի պատասխան Ադրբեջանի պահանջների՝ լքելու Ղարաբաղը, բազմահազարանոց հանրահավաքի ամբիոնից բացառեց այդ սցենարը. «Ես այստեղ եմ, ես պայքարում եմ, ու ես այստեղից չեմ գնալու, ու ես չեմ ենթարկվելու Ադրբեջանի պայմաններին», - հայտարարեց նա: Երեկվա ասուլիսում Նիկոլ Փաշինյանն ուղիղ չասաց՝ Ադրբեջանը Սյունիքով միջանցք է արդյոք պահանջում Լաչինի ճանապարհը բացելու համար: Բաքվի նպատակը, ըստ Երեւանի, արցախահայերի կամքը կոտրելն է: «Մեր գործիքակազմը պետք է լինի դիվանագիտական, այն է՝ միջազգային հնարավորինս մեծ ճնշում գործադրել Լաչինի միջանցքը բացելու հարցում», -երեկ ասաց նա:

Առաջիկա բանակցությունների մասին դեռ չի հայտարարվել: Արցախում դրությունն ավելի ու ավելի ծանր է դառնում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Վերջերս սոցիալական ցանցերում հրապարակվել էր ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանի եւ նրա ընտանիքի լուսանկարը «Զվարթնոց» օդանավակայանից: Լուրեր տարածվեցին նաեւ, որ Սաղաթելյանը Նոր տարին ընտանիքի հետ արտասահմանում է դիմավորել: Լուսանկարը ակտիվորեն տարածում էին հատկապես իշխանության ներկայացուցիչները եւ նրանց կողմնակիցները:

ArmLur.am-ը գրել էր նաեւ, որ Սաղաթելյանի՝ ընտանիքով Դուբայ մեկնելու «ստոպ» կադրն օդանավակայանից տարածվել է Փաշինյանի հրահանգով: ArmLur.am-ը երեկ կապ հաստատեց նաեւ Իշխան Սաղաթելյանի հետ՝ պարզելու, տեղյակ է արդյոք՝ ինչպես է «Զվարթնոց» օդանավակայանի անվտանգության տեսախցիկներից արված լուսանկարը հայտնվել համացանցում:

Սաղաթելյանն էլ ասաց, որ հիմա չի ցանկանում այդ մասին խոսել, բայց առաջիկայում կանդրադառնա դրան. «Ինձ համար հիմա թեման ակտուալ չէ, առավոտից մեր ընկերների տներն են հետախուզում, բերման են ենթարկել, կալանքի են տարել, հիմա ես չեմ ուզում նկարից խոսել, ուրիշ կարեւոր հարցեր կան, հետո կխոսեմ այդ թեմայով»:

50 ՀԱՍՏԻՔ

Հունվարի 9-ին հայտնի դարձան նորաստեղծ Ներքին գործերի նախարարության ամենաբարձր պաշտոնները զբաղեցնողների անունները: Վարչապետի որոշմամբ նախարարի պաշտոնը զբաղեցնում է Վահե Ղազարյանը, Դավիթ Համբարյանը, Արփինե Սարգսյանը, Կամո Ցուցուլյանն ու Արամ Հովհաննիսյանը կլինեն նախարարի տեղակալներ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ արդեն հաստատված է նորաստեղծ նախարարության հաստիքացուցակը: Ըստ այդմ, նախարարությունը կարող է ունենալ առավելագույնը 50 հաստիք, այսինքն՝ աշխատող: Այդ հաստիքներից չորսը տեղակալներն են, որոնք արդեն նշանակվել են, չորսը ղեկավարի տեղակալի օգնականներն են, երեքը կլինեն Վահե Ղազարյանի խորհրդականները, իսկ երկուսն էլ նրա օգնականները:

Այսպիսով, «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ներքին գործերի նախարարի լիազորությունները ստանձնելու օրվան հաջորդող երկրորդ շաբաթվա Կառավարության նիստի օրը Կառավարությունը լուծում է Ներքին գործերի նախարարության կազմավորման համար անհրաժեշտ գումարի հատկացման հարցերը, իսկ Ներքին գործերի նախարարության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երրորդ ամսվա վերջին աշխատանքային օրը կդադարեցվի Արտակարգ իրավիճակների նախարարության գործունեությունը:

ՆՈՐ ԸՆԹԱՑՔ

ՔՈՉԱՐՅԱՆԻ ԳՈՐԾԸ ՄՏԱՎ ԴԱՏԱՐԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 28-ին պատգամավորներ Ա.Ք.-ի (Անդրանիկ Քոչարյան) եւ Ս.Գ.-ի (Սիսակ Գաբրիելյանի) նկատմամբ խուլիգանական գործողություն կատարած Ա.Ս.-ի եւ Գ.Բ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ իրեական վարույթի նյութերը 2022 թվականի դեկտեմբերի 19-ին հանձնվել են Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Գլխավոր դատախազությունը տեղեկացրել էր, որ Գ.Բ.-ն, 2020 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 09:00-ից մինչեւ 11:30-ն ընկած ժամանակահատվածում, մասնակցելով Ազգային ժողովի բնականոն աշխատանքի խոչընդոտման նպատակով անցկացվող հավաքին, մի խումբ անձանց հետ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որը զուգորդվել է բռնության գործադրմամբ:

Մասնավորապես, Գ.Բ.-ն հավկիթներով եւ ձնագնդիկներով հարվածներ է հասցրել Ազգային ժողովի շենքին մոտեցող պատգամավոր Ա.Ք.-ին սպասարկող ծառայողական ավտոմեքենային, որի մեջ գտնվել է պատգամավորը: Դրանից անմիջապես հետո Գ.Բ.-ն բերման է ենթարկվել ոստիկանության Արաբկիրի բաժին:

Այնուհետեւ, հավաքի մի խումբ մասնակիցներ, շարունակելով խուլիգանական գործողությունները, ժամը 11:00-ի սահմաններում փակել են Դեմիրճյան փողոցի երթեւեկելի հատվածը: Վերջիններիս միացած Ա.Ս.-ն եւ գործով չպարզված անձինք խոչընդոտել են աշխատանքի վայր ժամանող Ազգային ժողովի պատգամավոր Ս.Գ.-ի երթեւեկը, հնչեցրել անպարկեշտ արտահայտություններ:

Լուսանկարը՝ 2020թ.

Պատգամավորը փորձել է խուսափել կոնֆլիկտից եւ առաջարկել բացել ճանապարհը, սակայն հավաքի մասնակիցներից չպարզված անձը Ս.Գ.-ին վիճաբանության մեջ ներքաշելու նպատակով հարվածել է նրա ավտոմեքենային: Վիճաբանություն է սկսվել պատգամավորի ու հավաքի մասնակիցների միջեւ, որի ընթացքում Ա.Ս.-ն եւ ինքնությունները չպարզված մասնակիցները հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ, հավկիթներով հարվածել Ս.Գ.-ին, քաշքշել եւ ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին: Ա.Ս.-ն եւ չպարզված անձինք, հրմշտելով եւ ճեղքելով խուլիգանական գործողությունները խափանող ոստիկանների կենդանի պատը, հետապնդել են Ս.Գ.-ին՝ շարունակելով կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը, տեւական ժամանակ սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրել, հավկիթներով հարվածել՝ պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ՝ ձախ բազկի ստորին երրորդականի դրսային մակերեսի, աջ արմնկային շրջանի արյունազեղումներ, ձախ այտային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդ:

Ա.Ս.-ի եւ վարույթով դեռեւս չպարզված անձանց խուլիգանական գործողությունները դադարել են դեպքի վայրում գտնվող ոստիկանության մեծաքանակ ուժերի միջամտության արդյունքում ժամը 11:20-ին՝ Ա.Ս.-ին ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկելուց հետո:

Հսկող դատախազի որոշմամբ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին Գ.Բ.-ի եւ Ա.Ս.-ի նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում (համապատասխանաբար՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ խուլիգանություն՝ մի խումբ անձանց կողմից, եւ Քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ խուլիգանություն՝ մի խումբ անձանց կողմից՝ հարվածներ հասցնելով կամ բռնի այլ գործողություններ կատարելով):

ՈՐՈՇՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

Երեկ Արուսյակ Ալեքսանյանը Հակակոռուպցիոն դատարանում էր: Նրա գործով առաջին նիստն էր, որը հետաձգվեց, քանի որ Արուսյակ Ալեքսանյանի պաշտպանները ծանրաբեռնվածության պատճառով չէին կարողացել գալ դատարան: Նկատենք, որ նիստի ժամանակ դատավոր Վահե Դոլմազյանին վրդովվեցրեց մեղադրյալներ Էրիկ Ալեքսանյանի եւ դատավոր Արուսյակ Ալեքսանյանի ներքին զրույցն ու ծիծաղը:

Գրել էինք, որ Ազգային անվտանգության ծառայությունը նախաքննության ավարտ է հայտարարել Երեւան քաղաքի դատավոր Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ հարուցված քրեական վարույթով:

Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 19-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Ռազմիկ Մարիկյանի նախագահությամբ, բավարարեց դատավոր Ալեքսանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ԱԱԾ քննիչի միջնորդությունը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 17-ին ԱԱԾ ծառայողները ներխուժել էին դատարանի շենք եւ ձերբակալել դատավոր Արուսյակ Ալեքսանյանին եւ փաստաբան Էրիկ Ալեքսանյանին:

ՀՀ գլխավոր դատախազը միջնորդություններ էր ներկայացրել ԲԴԽ՝ պահանջելով թույլատրել քրեական հետապնդում հարուցել եւ ազատությունից զրկել դատավոր Արուսյակ Ալեքսանյանին, որը ժամեր տեւած քննության արդյունքում բավարարվել է:

Քրեական վարույթը վերաբերում է քրեական հեղինակությանն առնչվող գործին: Դատարանը որոշել է գրավի դիմաց ազատ արձակել ֆազ մականունով հայտնի քրեական հեղինակություն համարվող Սերգեյ Գրիգորյանին՝ բավարարելով վերջինիս պաշտպան Էրիկ Ալեքսանյանի ներկայացրած միջնորդությունը, եւ այժմ ԱԱԾ-ն դատավորին մեղադրում է ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու եւ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Շիրակին մարզի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է Պեմզաշենի երեք սպանությունների գործով երկու մեղադրյալներ Վրույր Բարսեղյանի եւ Արկադի Բարսեղյանի կալանավորումը 2 ամսով երկարացնելու միջնորդությունը: Այս մասին հայտնում են Քննչական կոմիտեից: Հիշեցնենք, որ նոյեմբերի 9-ին Պեմզաշեն գյուղում՝ սեփական տանը, սպանված էին հայտնաբերվել 31-ամյա բնակչուհի Զարինե Մելիքսեթյանի եւ վերջինիս 12-ամյա դստեր ու 8-ամյա որդու մարմինները: Դաժան սպանության կասկածանքով ձերբակալվել, ապա կալանավորվել են նույն գյուղի բնակիչներ 32-ամյա Վրույր Բարսեղյանը եւ նրա ազգականը՝ 41-ամյա Արկադի Բարսեղյանը: Վրույրը Բարսեղյանն ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը՝ տալով ինքնախոստովանական ցուցմունք, իսկ Արկադի Բարսեղյանը, հակառակը, չի ընդունում մեղադրանքը եւ նշում է, որ դեպքի վայրում չի եղել: Սպանված կնոջ ամուսինը ՌԴ-ում էր՝ արտագնա աշխատանքի, վերադարձել է ողբերգական դեպքից հետո: Ըստ Քննչական կոմիտեի վարկածի՝ անմարդկային սպանությունների շարժառիթը եղել է գողությունը: Վրույր Բարսեղյանին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ ՔՕ 155-րդ (սպանություն) հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ եւ 13-րդ կետերով, 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ , 5-րդ, 6-րդ եւ 13-րդ կետերով (2 դրվագ), 252-րդ (ավազակություն) հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 198-րդ (սեքսուալ բնույթի բռնի գործողություններ) հոդվածի 4-րդ մասով: Արկադի Բարսեղյանին մեղադրանք է ներկայացվել 155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ, 13-րդ կետերով եւ 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

ԿԱՆ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐ

Երեկ՝վաղ առավոտյան՝ժամը յոթի սահմաններում, ուժային կառույցների ներկայացուցիչները Արարատի մարզում եւ Երեւանում ներխուժել են ՀՅԴ մի շարք անդամների բնակարաններ խուզարկություն իրականացնելու պատրվակով, կան բերման ենթարկվածներ:

Ուժային կառույցների ներկայացուցիչները գործողություններ են իրականացրել նաեւ 6 ամիս ապօրինի կալանքի տակ գտնված եւ միայն վերջերս դատարանի որոշմամբ ազատության մեջ հայտնված Գերասիմ Վարդանյանի տանը:

Իրավապահ համակարգը շարունակում է լինել բութ գործիք դավաճան իշխանության ձեռքին քաղաքական հարցեր լուծելու համար:

ArmLur.am-ի հետ զրույցում Գերասիմ Վարդանյանը հայտնեց, որ իր բնակարանը մտել են ժամը 7-ին, տարել են կրիչ, որի մեջ եղել է իր թեզի պաշտպանությունը: Ժամը 15:00-ին իրեն կանչել են հարցաքննության Քննչական կոմիտե քրեական վարույթի շրջանակներում:

«Ես հայտարարում եմ, որ միգուցե այսօրվա դեպքերը կապ ունեն Վճռաբեկ դատարանի երեկվա որոշման հետ: Դատախազի տեղակալը բողոքարկել էր իմ կալանքի հարցը, ինչն էլ Վճռաբեկը մերժել էր, եւ ես մնացել եմ ազատության մեջ: Ես այս ամենի տերերին ու տիրոջը ճանաչում եմ. տերը Նիկոլ Փաշինյանն է, իսկ նրա տերը՝Ալիեւը, ինձ չեն վախեցնի, իմ ընտանիքին չեն վախեցնի, ուղղակի ցավը այն է, որ իր ընկերներին են թիրախավորել, ինչը չի ներվելու: Այս պահին ես Արարատի մարզի «Դաշնակցության» գրասենյակում եմ»,-ընդգծեց մեր զրուցակիցը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 36 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ԼՈՒՐԵՐ

ԳՆԱՃ՝ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հայաստանի վիճակագրական կոմիտեն սպառողական շուկայում գնաճ է արձանագրել: Հանրապետության բոլոր քաղաքներում անցյալ տարվա դեկտեմբերին, նոյեմբերի համեմատ, սպառողական գներն աճել են 1.0-1.1 տոկոսով: Երեւանում սպառողական գներն աճել են 1.1 տոկոսով: Թանկացել են առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքատեսակներ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ հացի գինը նախորդ տարվա դեկտեմբեր ամսին, նոյեմբերի համեմատ, բարձրացել է 0.3 տոկոսով. մեկ տարվա ընթացքում հացը թանկացել է 14.3 տոկոսով: Թանկացել է նաեւ ձավարը, հաճարը: Սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գները մեկ ամսվա ընթացքում բարձրացել են 2.4 տոկոսով: Ըստ պաշտոնական աղբյուրի՝ մայրաքաղաքում սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գների մակարդակն աճել է 2.3 տոկոսով: Ձվի գինն է բարձրացել. հավկիթի շուկայում դեկտեմբեր ամսին, նոյեմբերի համեմատ, գրանցվել է 6.6 տոկոս գնաճ: Կարագի եւ հրուշակեղենի գները եւս բարձրացել են: Կարագի գինը մեկ տարվա ընթացքում բարձրացել է 4 տոկոսով, իսկ դեկտեմբերին, նոյեմբերի համեմատ, այն թանկացել է 0.3 տոկոսով: Ալյուրն է էժանացել 0.6 տոկոսով, բայց մեկ տարվա ընթացքում, հակառակը, այն թանկացել է 7.6 տոկոսով: Նույն պատկերն է նաեւ բրձնի, ոսպի, մակարոնեղենի, հնդկացորենի, ոլոռի, մարգարինի շուկաներում: Նշված ապրանքատեսակները նախորդ տարվա դեկտեմբերին, 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, թանկացել են, իսկ դեկտեմբերին, նոյեմբերի համեմատ, էժանացել, բայց՝ չնչին: Շաքարավազի շուկայում եւս գնանկում է արձանագրվել 0.1 տոկոսի չափով: Արեւածաղկի ձեթն է էժանացել. այս շուկայում Վիճակագրական կոմիտեն արձանագրել է 2.1 տոկոս գնանկում: Բանջարեղենը բավականին թանկացել է. բանջարեղենի շուկայում Ամանորի նախաշեմին արձանագրված գնաճը կազմել է 13.7 տոկոս:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Հեղինակավոր Forbes ամսագիրը կազմել է 2023 թվականին ճանապարհորդությունների համար ամենահետաքրքիր ուղղությունների ցանկը: Forbes-ը Հայաստանին ճանաչել է 2023 թվականի լավագույն տուրիստական ուղղություններից մեկը, որն արժե այցելել: Հոդվածում նշվում է, որ Հայաստանը գեղեցիկ երկիր է՝ հարուստ պատմությամբ եւ մշակույթով: «Այն հիանալի բնապատկերների տուն է՝ ներառյալ Կովկասյան լեռները եւ Սեւանա լիճը, ինչպես նաեւ բազմաթիվ հնագույն ճարտարապետական հրաշքներ, ինչպիսիք են Գառնիի տաճարը եւ Հաղպատի վանքը, որոնցից մի քանիսը ճանաչել է «ՅՈՒՆԵՍԿՕ»-ն: Երկիրը հայտնի է նաեւ իր համեղ խոհանոցով՝ ներառյալ մի շարք անուշաբույր խոտաբույսեր եւ համեմունքներ: Եթե սննդի սիրահար եք, ապա ամեն ճաշի հետ բաց մի թողեք հայկական խաշը (հարուստ արգանակ), տոլման (խաղողի տերեւներով) եւ, իհարկե, տնական թթու վարունգը»,- ասվում է Հայաստանի նկարագրության մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ հունվարի 11-ին հրավիրվել է Անվտանգության խորհրդի նիստ, որին մասնակցում էին ԱՀ ԱԺ քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչները:

Քննարկվել են Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակման պատճառով Արցախում արդեն շուրջ մեկ ամիս տեւող հումանիտար ճգնաժամի հետեւանքները, դրա վերաբերյալ վերջին օրերին հնչած բարձր մակարդակի քաղաքական հայտարարությունները. ընդունվել է ԱՀ ԱԽ հայտարարություն, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Շուրջ մեկ ամիս է, ինչ Ադրբեջանի գործող իշխանությունների լիակատար ու բացահայտ աջակցությամբ մի խումբ այսպես կոչված էկոակտիվիստներ փակել են Արցախը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհը: Նման գործողություններով ադրբեջանական կողմն Արցախի Հանրապետության բնակչությանը փաստացի զրկել է արտաքին աշխարհի հետ շփման միակ հնարավորությունից՝ 120 հազար բնակչությանը թողնելով լիակատար շրջափակման մեջ՝ դրանից բխող հումանիտար, առողջապահական եւ տնտեսական բոլոր հետեւանքներով հանդերձ:

Ադրբեջանի նախագահի՝ սույն թվականի հունվարի 10-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում հնչեցրած մտքերը հերթական անգամ փաստեցին, որ այս ամենը ոչ այլ ինչ է, քան Ադրբեջանի իշխանությունների կողմից ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ուժի սպառնալիքի կիրառման ակնհայտ դրսեւորում, որը շարունակությունն է 2020 թ. Արցախի Հանրապետության ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի:

Այս իրողությունների համատեքստում, ՀՀ վարչապետի՝ նախօրեին տեղի ունեցած ասուլիսի ընթացքում հնչեցրած մի շարք պնդումներ եւ տեսակետներ առաջացրել են մտահոգություններ, քանի որ չեն համապատասխանում ինչպես համազգային պայքարի գաղափարներին, այնպես էլ Արցախի Հանրապետության բնակչության եւ իշխանությունների որդեգրած դիրքորոշմանը:

Մենք գիտակցում ենք բոլոր այն հետեւանքները, որոնք բխում են մեր որդեգրած քաղաքական գծից, եւ վերահաստատում ենք մեր դիրքորոշումն առ այն, որ Արցախի ինքնիշխանությունը եւ պատմական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու իրավունքը բացարձակ արժեքներ են: Որեւէ պարտադրանք կամ սպառնալիք չի կարող մեզ հետ պահել պայքարը շարունակելու մեր կայացրած որոշումից:

Ըստ այդմ, դիմում ենք միջազգային հանրությանը՝ Ադրբեջանի կողմից ձեռնարկված ահաբեկչական գործողությունները, ծրագրվող էթնիկ զտումները եւ նախապատրաստվող նոր ցեղասպանությունը կանխելու համար պատասխանատվություն ստանձնելու կոչով:

Արցախի Հանրապետության ժողովուրդը եւ իշխանությունները վստահ են, որ աշխարահասփյուռ հայությունը կշարունակի սատար կանգնել Արցախի իրենց քույրերի եւ եղբայրների կայացրած որոշմանը, եւ ՀՀ իշխանություններին հորդորում են առաջնորդվել բացառապես Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը միջազգային ատյաններում առաջ տանելու եւ պաշտպանելու դիրքորոշմամբ՝ օգտագործելով միջազգայնորեն ճանաչված պետության բոլոր հնարավորություններն ու ողջ գործիքակազմը»:

ԼՈՒՐԵՐ

ԱՄԱՆՈՐՅԱ ԾԱԽՍԵՐ

Տավուշի մարզի խոշոր 3 համայնքներում՝ Իջեւանում, Բերդում, Նոյեմբերյանում, Ամանորի տոնակատարությունները համեստ են եղել, այդ նպատակով Երեւանից երգիչ-երգչուհիների չեն հրավիրել: Բերդ համայնքի սահմանամերձ, հեռավոր Չինարի գյուղում 3-րդ տարին է, ինչ տարեմուտի հրավառություններ չեն կատարվում: Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանի նախաձեռնությամբ տարեմուտը Դիլիջան համայնքում տոնել են մեծ շուքով, քաղաքի փողոցները զարդարվել են տոնական լույսերով, քաղաքի կենտրոնում տեղադրվել է մեծ տոնածառ, դեկտեմբերի 27-ին կայացել է մեծ համերգ՝ մայրաքաղաքից ժամանած երգիչ-երգուհիների եւ դիջեյի մասնակցությամբ, տոնական համերգը հագեցած է եղել ժամանակակից լուսային ձեւավորումներով: 2022թ. դեկտեմբերի սկզբին Դիլիջան համայնքի ղեկավարի խորհրդական Նոնա Գրիգորանն ամանորյա միջոցառումների կազմակերպման հարցով զեկուցագրով դիմել է Դիլիջան համայնքի ղեկավարին, համայնքի ավագանին 2022թ. դեկտեմբերի 1-ին որոշել է Դիլիջան համայնքի 2022թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 8 միլիոն դրամ հատկացնել ամանորյա միջոցառումներ կազմակերպելու համար: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրված ավագանու այդ որոշումը տառասխալով է գրված՝ «ամանօրյա»: Դիլիջանի պետական քոլեջի շրջանավարտ, այժմ Հայաստանի Եվրոպական համալսարանում հեռակա սովորող, 1984թ. ծնված Դավիթ Սարգսյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 2021թ. փետրվարի 26-ի որոշմամբ նշանակվել է Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար: 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջան համայքի ավագանու ընտրությունների արդյունքներով ձեւավորված ավագանու կողմից նա ընտրվել է Դիլիջան համայնքի ղեկավար:

ԳՈՂԸ ԲՌՆՎԵԼ Է

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Դավիթ Հախոյանի դատավարությունը: Դավիթ Համլետի Հախոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի պայմանագրային զինծառայող, 2022 թվականի օգոստոսի 7-ին խմբով՝ քննությամբ դեռեւս ինքնությունը չպարզված անձի հետ, նախնական համաձայնությամբ, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ ապօրինի մուտք է գործել Տավուշի մարզի Իջեւան համայնքի վարչական տարածքում գտնվող «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին պատկանող «Կայարան» օբեկտի պահպանվող սենյակ, որտեղից փորձել է գողանալ խոշոր չափերով՝ ընդհանուր 1 612 000 ՀՀ դրամ արժողությամբ թվով 104 հատ էլեկտրական կարգավորիչներ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի իրագործել, քանի որ նույն օրը հիշյալ տարածքի պահակ Գարուշ Մարտիրոսյանը դեպքի վայրում հայտնաբերել եւ բռնել է նրան, իսկ հանցակիցը՝ ինքնությունը չպարզված համարվող անձը, դեպքի վայրից դիմել է փախուստի:

Դ. Հախոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 44-254 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետերով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱՃ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդները նախորդ տարվա 11 ամիսների ընթացքում Ռուսաստան են փոխանցել ավելի քան 16 մլրդ ՀՀ դրամ՝ կատարելով ավելի քան 50 հազ. գործարք: Նախորդող տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ փոխանցումների թիվն աճել է 69%-ով: Դեկտեմբերին բանկն ընդլայնել է փոխանցումների հնարավորությունները, եւ այժմ երկրի բնակիչները կարող են ՀՀ դրամով գործարքներ կատարել առանց արտարժույթի փոխարկման ծախսերի:

Հայաստանից Ռուսաստան ՀՀ դրամով դրամական փոխանցում կատարելու համար անհրաժեշտ է հաշիվ բացել «ՎՏԲ-Հայաստան» բանկում եւ նշել ստացողի՝ ՀՀ դրամով հաշվեհամարը Ռուսաստանի «ՎՏԲ» բանկում: Ծառայությունը հասանելի է բանկի բոլոր մասնաճյուղերում. հետագայում բանկը նախատեսում է այն հասանելի դարձնել նաեւ հեռահար ուղիներով: Ռուսաստանում ստացողի հաշվին գումարը կմուտքագրվի մեկ օրվա ընթացքում: Հաճախորդը կարող է ՀՀ դրամը փոխարկել այլ արժույթի ռուսաստանյան «ՎՏԲ» բանկի մասնաճյուղերում կամ փոխարկել շահավետ փոխարժեքով ВТБ Онлайн հավելվածում: Յուրաքանչյուր գործարքի միջնորդավճարը կազմում է գումարի 2%-ը, նվազագույնը՝ 1,5 հազ. ՀՀ դրամ:

«Մենք շարունակում ենք նկատել Հայաստանից դեպի Ռուսաստան միջազգային փոխանցումների ծավալների աճի միտում: Նախորդ տարվա 11 ամիսների ընթացքում երկրի բնակիչները ռուս օգտատերերին փոխանցել են ավելի քան 16 մլրդ ՀՀ դրամ, իսկ գործարքների թիվը հասել է 52 հազարի, ինչը 69%-ով գերազանցում է նախորդող տարվա ցուցանիշը: Ֆինանսական նոր իրավիճակում զգալիորեն փոխվել են դրամական միջոցների միջազգային փոխանցումների՝ մեզ սովորական դարձած եղանակները, բացի այդ, զգալիորեն թանկացել են արժույթի փոխարկման գործառնությունները: Այս ֆոնին «ՎՏԲ»-ն մշակել է ծառայություն այն հաճախորդների համար, որոնք պարբերաբար դրամական փոխանցումներ են կատարում դեպի Ռուսաստան. նոր ծառայությունը կօգնի միջոցներ ստանալ անմիջապես դրամային հաշիվներին, առանց արտարժույթի փոխարկման լրացուցիչ կորուստների»,- նշել է «ՎՏԲ- Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի- տնօրինության նախագահի տեղակալի ժ/պ Տարաս Կլադչենկոն:

Անցյալ տարվա ընթացքում «ՎՏԲ»-ն ակտիվորեն մշակել է միջազգային փոխանցումների այլընտրանքային տարբերակներ: Բանկը մեկնարկել է դրամական փոխանցումներ Ռուսաստանից Հայաստան ՀՀ դրամով շահառուի բանկային տվյալների միջոցով: Փոխանցումը կատարելու համար ВТБ Онлайн հավելվածի օգտատերը պետք է նշի միայն ստացողի քարտի համարը եւ ԱԱՀ-ն: Բանկը մեկնարկել է նաեւ իր սեփական ծառայությունը՝ ռուսաստանյան հաճախորդներից ՀՀ դրամով ակնթարթային փոխանցումներ բջջային հեռախոսահամարով՝ ВТБ Онлайн հավելվածի միջոցով: Հայաստանը դարձավ առաջին երկիրը, որտեղ մեկնարկեց նոր գործառույթը:

Փոխանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ «ՎՏԲ-Հայաստան» բանկի պաշտոնական կայքում, բանկի մասնաճյուղերում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն 8787 հեռախոսահամարով:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՐՑԱԽՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԾԱՆՐ Է

Արցախի Հանրապետության պետական նախարար, օպերատիվ շտաբի պետ Ռուբեն Վարդանյանն երեկ ընդլայնված խորհրդակցություն էր հրավիրել՝ պետական մարմինների ղեկավար կազմի մասնակցությամբ:

Ներկայացնելով Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետեւանքով ստեղծված ընթացիկ իրավիճակը՝ Ռուբեն Վարդանյանը նշել է, որ ձմռան այս օրերին Ադրբեջանը փաստացի խոչընդոտում է Հայաստանից էներգամատակարմանը: «Իրավիճակը բարդ է, եւ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր հասարակությանը, որը դիմանում է բոլոր դժվարություններին: Բազմաթիվ խնդիրներ ունենք թե՛ պարենի, թե՛ դեղորայքի հետ կապված: Վերջին երկու օրերին գումարվեց նաեւ էլեկտրաէներգիայի խնդիրը: Ադրբեջանը ոչ միայն չի թողնում սննդամթերք, դեղորայք բերել, այլեւ խոչընդոտում է մասնագետների այցը վթարի վայր՝ էլեկտրաէներգիայի մատակարարումը վերականգնելու համար»,-նշել է պետնախարարը՝ կարեւորելով ներքին ռեսուրսների խնայողական օգատագործումը:

Իրավիճակը բարդ է նաեւ մասնավոր հատվածում, քանի որ շրջափակման հետ կապված տնտեսությունը եւս ճգնաժամի մեջ է հայտնվել, բազմաթիվ մարդիկ կորցնում են աշխատանքը:

Պետնախարարի գնահատմամբ՝ Ադրբեջանի քաղաքականությունը հստակ է՝ ճնշումների միջոցով հասնել Արցախի հայթափմանը: «Բայց մենք պայքարում ենք մեր հայրենիքում, մեր հողի վրա ապրելու իրավունքի համար: Ու շատ ոգեւորիչ է, որ մեր ժողովուրդն ընդունում է այս մոտեցումը: Բայց դա մեզնից, որպես ղեկավարներ, պահանջում է ժողովրդի հետ ազնիվ ու անկեղծ լինել, հասկանալ իրավիճակի ողջ լրջությունը»:

Պետնախարարը ներկայացրել է նորանշանակ նախարարներին՝ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Ղազարյանին, արդարադատության նախարար Սրբուհի Արզումանյանին, սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարար Արմեն Մանգասարյանին եւ վերանշանակված՝ քաղաքաշինության նախարար Արամ Սարգսյանին. «Չեմ ուզում շնորհավորել նորանշանակ նախարարներին, այլ ուզում եմ շնորհակալություն հայտնել՝ այս չափազանց բարդ իրավիճակում պատասխանատվություն ստանձնելու համար»:

Պետնախարարը նշել է, որ կառավարությունն օգտագործում է բոլոր գործիքները՝ դիվանագիտական, իրավական, տեղեկատվական, եւ շարունակում է ամեն ջանք գործադրել ճանապարհը բացելու համար, բայց միաժամանակ նկատել է, որ, որպես կառավարություն, պարտավոր են պատրաստ լինել բոլոր հնարավոր զարգացումներին:

Նա ուշադրություն է հրավիրել այն հանգամանքին, որ շրջափակումն էապես փոխում է մարդկանց կենսակերպը՝ պարտադրելով խնայողություններ ու սահմանափակումներ, եւ բնակչության կյանքը չի կարող լինել այնպես, ինչպես սովորական պայմաններում: Պետնախարարը կարեւորել է բնակչության շրջանում իրազեկման եւ բացատրական աշխատանքների իրականացումը եւ պաշտոնյաների, օպերատիվ շտաբի անդամների անմիջական հանդիպումներն ու շփումները մարդկանց հետ:

ԱՃՈՒՐԴ. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՃԱՌՔ

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 02.02.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2480935:

-Մեկնարկային գին՝ 3,779,136 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2161076:

- Մեկնարկային գին՝ 3,044,304 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2626848:

- Մեկնարկային գին՝ 1,312,200 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2140468:

-Մեկնարկային գին՝ 1,102,248 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, – Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

-Մեկնարկային գին՝ 1,607,445 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երեւանյան փողոց, հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2186432:

- Մեկնարկային գին՝ 734,832 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

-Մեկնարկային գին՝ 4,855,140 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2183736:

-Մեկնարկային գին՝ 1,463,103 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝ 1,617,286 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝ 1,115,370 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ԿԱՅԻՆ, ՉԿԱՅԻՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ»

ՆՈՐ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ամանորին ընդառաջ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում անցկացվեց երաժշտական նվագակցությամբ «Կային, չկային հեքիաթներ» խորագրով գրական-գեղարվեստական պերֆորմանսը:



Թատրոնի եւ կինոյի դերասաններ, ՀՀ ժողովրդական արտիստ Հրանտ Թոխատյանը, Անահիտ Կիրակոսյանը, Անահիտ Գաբրիելյանը, Արեն Խաչատրյանը Armenian String Quartet-ի դասական երաժշտության կատարումների ուղեկցությամբ կարդացին աշխարհի ժողովուրդների հեքիաթները:

Միջոցառմանը տեղի ունեցավ «Կային, չկային հեքիաթներ» ժողովածուի շնորհանդեսը, որում հյուսված են աշխարհի ժողովուրդների 26 լեգենդներ՝ նկարագրված տարբեր երկրների երիտասարդ նկարիչների կողմից: Ներկայացվեցին 7 հեքիաթներ, զուգահեռաբար գեղեցիկ տեսաշար, որը պատմում էր ընտրված երկրների, այդ թվում՝ Հայաստանի մասին:

Միջոցառման ընթացքում ներկաներին ողջունեց հրատարակիչ, Perspectum հրատարակչության տնօրեն, հեքիաթների գրքի գաղափարի հեղինակ Ալինա Գասումյանովան:

«Գրքի ստեղծման աշխատանքներում ներգրավված է եղել 27 երիտասարդ, արդեն հայտնի նկարազարդողներ Ռուսաստանից, Իտալիայից, Լիտվայից, Գերմանիայից, Ուկրաինայից, Բելառուսից, Ղազախստանից, Վրաստանից, Հայաստանից եւ Էստոնիայից: Նրանց մի մասը սկսնակ արտիստներ են, մյուսներն աշխատում են շատ հայտնի ընկերությունների համար՝ ստեղծելով տարաբնույթ նկարազարդումներ: Առանձնահատուկ շեշտեմ՝ համագործակցել ենք նաեւ հայ նկարազարդողի հետ»,-նշեց նա:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ լրագրող, բանասեր, գրող, «Կային, չկային հեքիաթներ» գրքի հեղինակ Աննա Խրուստալեւան: Վերջինս հատուկ այս միջոցառման համար եկել էր Հայաստան: «Ժողովրդական հեքիաթները նման են գոհարների. թափառող սյուժեները դրանք կապում են միմյանց, բայց եթե ավելի ուշադիր նայեք, չեք գտնի երկու լիովին նույնական հեքիաթներ: Ազգային բնավորության մասին ոչինչ ավելի լավ ու միեւնույն ժամանակ ավելի բանաստեղծական չի պատմում, ինչպես հեքիաթը. չէ՞ որ ֆանտաստիկ սյուժեի եւ կախարդական պատկերների միջոցով այստեղ հստակ երեւում են մարդկային հիմնական սկզբունքները, բարոյականության նորմերը, աշխարհայացքը, կենցաղային յուրօրինակ կոլորիտը»,- նշեց հեղինակը:

65-ԱՄՅԱԿ

ՏՈՆԵԼՈՒ ՈՉ ՄԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՄ

Հունվարի 10-ին ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան Հրանտ Թոխատյանը տոնում է ծննդյան 65-ամյակը: Դերասանը ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ տեսնելով Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցող իրադարձությունները՝ չի կարող տրամադրություն ունենալ եւ ուրախ լինել:

«Տոնելու ոչ մի տրամադրություն չունեմ: Գիշերը նշել եմ իմ ընտանիքի հետ: Ես իմ երազանքները փորձում եմ միշտ ի կատար ածել, հիմա, բնականաբար, ունեմ երազանքներ, որոնք կիրականանան»,- հակիրճ մեզ հետ զրույցում նշեց սիրված դերասանը: Հիշեցնենք, որ Հրանտ Թոխատյանը ծնվել է Արամ եւ Եվգենյա Թոխատյանների ընտանիքում: Հայրը մասնագիտությամբ 1-ին դասի ավտոմեխանիկ էր, ավտոռալլիստ, իսկ մայրը՝ անտառային տնտեսության ինժեներ: Նախկին ամուսնություններից Թոխատյանն ունի երկու որդի: Ներկայիս կինը Երեւանի կամերային թատրոնի դերասանուհի Լուիզա Ներսիսյանն է: Նրանք ունեն մեկ դուստր: Հրանտ Թոխատյանը ներկայումս ակտիվորեն հանդես է գալիս կինոյում եւ թատերական ներկայացումներում՝ համագործակցելով հայ, ռուս, ինչպես նաեւ օտարերկրացի ռեժիսորների, պրոդյուսերների, թատերական գործիչների եւ կինոընկերությունների հետ: Թոխատյանը բուռն գործունեություն է ծավալում ոչ միայն հայրենիքում, այլեւ Ռուսաստանի Դաշնությունում:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐՔ

ԿԻՆՈՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսում կայացել է «Ոսկե գլոբուս» 80-րդ մրցանակաբաշխությունը, հայտնի են «Ոսկե գլոբուս» կինոմրցանակաբաշխության հաղթողները: Արարողությունը հեռարձակել է NBC հեռուստաալիքը: Եվ այսպես, Սթիվեն Սփիլբերգն արժանացել է «Լավագույն ռեժիսոր» մրցանակին The Fabelmans ֆիլմի համար: Ֆիլմում ռեժիսորը մասամբ նկարագրում է իր երիտասարդությունը: Կինոնկարը հաղթել է նաեւ «Լավագույն ֆիլմ» անվանակարգում: Օսթին Բաթլերը մրցանակի է արժանացել «Լավագույն դերասան» անվանակարգում Elvis ֆիլմում հանրաճանաչ արտիստին մարմնավորելու համար: Լավագույն դրամատիկ դերասանուհի է ճանաչվել Քեյթ Բլանշեթը Tar ֆիլմում դերակատարման համար: Բլանշետը ներկա չի եղել մրցանակաբաշխությանը, քանի որ մասնակցում է նկարահանումների Մեծ Բրիտանիայում: «Կատակերգություն/մյուզիքլ» ժանրում լավագույն դերասան է ճանաչվել Քոլին Ֆարելը The Banshees of Inisherin ֆիլմի համար: Տրագիկոմեդիայի գործողությունները տեղի են ունենում իռլանդական կղզում: Ֆիլմը մրցանակի է արժանացել նաեւ որպես լավագույն կատակերգություն/մյուզիքլ, իսկ սցենարի հեղինակ Մարտին Մակդոնան եւս «Ոսկե գլոբուս»-ի է արժանացել: «Կատակերգություն/մյուզիքլ» ժանրում լավագույն դերասանուհի է համարվել Միշել Յեոն Everything Everywhere All At Once ֆիլմի համար: Այն գիտաֆանտաստիկ կատակերգություն է: «Լավագույն մուլտֆիլմ» է ճանաչվել մեքսիկացի ռեժիսոր Գիլերմո դել Տորոյի «Պինոկիո»-ն: Լավագույն դրամատիկ սերիալ է ճանաչվել House of the Dragon-ը: Մեւին Քոսթները «Ոսկե գլոբուս» է ստացել սերիալի լավագույն դերասան անվանակարգում Yellowstone սերիալում խաղալու համար: Սեսիլ Բ. Դե Միլլի հեղինակավոր մրցանակը, որը տրվում է կինեմատոգրաֆիայի բնագավառում գրանցած հաջողությունների համար, տրվել է Էդի Մերֆիին:

ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ իրականացվում է «Միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներին եւ այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների եւ երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցություն» ծրագիրը: Ծրագրով նախարարության կողմից ավիատոմսի ծախսի փոխհատուցում կարող են ստանալ 16-ից մինչեւ 30 (ներառյալ) տարեկան երիտասարդները կամ 16-ից մինչեւ 30 (ներառյալ) տարեկան երիտասարդներից կազմված մինչեւ հինգհոգանոց խմբի անդամները՝ հետեւյալ միջոցառումներին մասնակցելու համար.

-միջազգային երիտասարդական ծրագրեր՝ ֆորումներ, հանդիպումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, դասընթացներ (թրեյնինգ), համաժողովներ, գագաթնաժողովներ, նիստեր,

-միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, գիտական համաժողովներ, գիտական նստաշրջաններ,

-միջազգային գիտատեխնիկական մրցույթներ,

-միջազգային մշակութային մրցույթներ, փառատոներ, ցուցահանդեսներ,

-միջազգային ինտելեկտուալ մրցույթներ,

-միջազգային ստարտափ ծրագրեր:

2022 թվականին փոխհատուցում ստացել են 15 երիտասարդներ՝ 3 773 930 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր երեսուն) ՀՀ դրամին համարժեք:

● *Հունվարի 14-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Գեղեցկուհին եւ հրեշը» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-2000 դրամ: Սկիզբը՝ժամը 15:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. ՀՀ տարածքում կառուցված բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից հիպոթեքային վարկով բնակարան ձեռք բերած վարկառուն միաժամանակ վարձու աշխատող եւ անհատ ձեռնարկատեր է. տվյալ դեպքում ինչպե՞ս է կատարվում եկամտային հարկի գումարների վերադարձը:

Գարիկ Մուրադյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 19.02.2015թ. N 205-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ եթե վարկառուն միաժամանակ վարձու աշխատող եւ անհատ ձեռնարկատեր է, ապա հաշվետու տարվա համար ներկայացված տարեկան հաշվարկի հիման վրա հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի գումարների վերադարձը կատարվում է տվյալ տարվա ընթացքում հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների հանրագումարի եւ տվյալ տարվա եռամսյակների ամիսների համար վճարված եւ վերադարձված (վերադարձման ենթակա) եկամտային հարկի հանրագումարի դրական տարբերության չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն ՀՀ կառավարության 19.02.2015թ. N 205-Ն որոշման 4-րդ կետի՝ վարձու աշխատողին հաշվետու եռամսյակի որեւէ ամսում հաշվարկված աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատություն ընդունվելու համար ո՞ւմ պետք է դիմի քաղաքացին:

Լուսինե Օհանյան (57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին (այսուհետ՝ տարածքային մարմին), որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գնահատված կարիքների համաձայն՝ խնամքի ծառայությունները տրամադրվում են ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Համաձայն Numbeo առցանց պորտալի վերլուծության՝ 417 քաղաքների շարքում Երեւանն ընդգրկվել է ամենաանվտանգ 20 քաղաքների ցանկում:

Առաջին երեք հորիզոնականում են ԱՄԷ մայրաքաղաք Աբու Դաբին, Կատարի մայրաքաղաք Դոհան եւ Թայվանի մայրաքաղաք Թայպեյը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.01.2023**
Հասցեն՝ Գերպրոնիրքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: